ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սոյն թուականի Սեպտեմբերի 25ից մինչև Հոկտեմբերի 5ը Սուրբ Էջմիածնում տեղի ունեցան սրբալոյս միւռոնի օրհնութեան և Տ. Տ. Վազգէն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան քառամեակին նուիրուած հանդիսութիւններ։

Այս առթիւ Մայր Աթոռ էին ժամանել Երուսաղէմի Հայոց Ամենապատիւ Տ. Եղիշէ Պատրիարքը, Կոստանդնուպոլսի Հայոց Ամենապատիւ Տ. Շնորհք Պատրիարքը, Հայ Եկեղեցու բոլոր թեմական առաջնորդներն ու թեմերի պատգամաւորները, Մայր Աթոռի բարեբարներ, ինչպէս նաև բազում հրաւիրեալներ և բազմահազար ուխտաւորներ։

Հանդիսութիւններին մասնակցելու համար Ս. Էջմիածին էին ժամանել նաև քոյր եկեղեցիների հոգևոր պետեր և ներկայացուցիչներ։

Ռուս Պրաւոսլաւ Եկեղեցու պատուիրակութեանը գլխաւորում էր Մոսկուայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբութիւն Տ. Պիմենը, Վրաց Օրթոդոքս Եկեղեցու պատուիրակութեանը՝ Նորին Սրբութիւն Տ. Դաւիթ Ե Պատրիարք-Կաթողիկոսը, Հնդկաստանի Մալաբար Եկեղեցու պատուիրակութեանը՝ Նորին Սրբութիւն Վասիլիոս Մար Թոմա Մատթէոս Ա Կաթողիկոսը։

Կաթոլիկ Եկեղեցու պետ Պողոս Զ Պապին ներկայացնում էր Կարդինալ Ժան Վիլլեբրանդսը, Քենթբրեբրիի Արքեպիսկոպոսին՝ Լոնդոնի Եպիսկոպոս Ջերալդ Ալեքսանդր Էլիսոնը, Երուսաղէմի Յոյն Պատրիարքութեանը՝ Միտրոպոլիտ Գերմանոս Մամալիսը, Երուսաղէմի Ֆրանչիսկեան Միաբանութեանը՝ Մաուրիլիո Սակկի Վարդապետը։

Սեպտեմբեր 25ին երեկոյեան Մայր Տաճարում տեղի ունեցաւ կիրակամտի ժամերգութիւն և հոգևոր համերգ, որին ներկայ եղան քոյր եկեղեցիների պատուիրակութիւնները, Հայ հոգևորական և աշխարհական պատգամաւորներ, ինչպէս նաև մեծ թուով ուխտաւորներ։

Սեպտեմբերի 26ին, Կիրակի օրը, առաւօտեան ժամը 10ին Մայր Տաճարում հանդիսաւոր սուրբ պատարագ մատուցեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տէր Շնորհք Արքեպիսկոպոսը։ Ս. Պատարագի ընթացքում քարոզեց Հայոց Հայրապետը և ողջունեց ներկայութիւնը Մայր Աթոռի հոգևորական և աշխարհական բոլոր հիւրերի։ Ապա Մայր Տաճարում ողջոյնի և շնորհաւորանքի խօսք ասաց նաև Տ. Պիմեն սրբազան պատրիարքը։

Պատարագից յետոյ հոգևոր պետերը առաջնորդուեցին Մայր Տաճարի բակի արևմտեան մասում այս առթիւ պատրաստուած պատուանդանը։

Ժամը 12ին Վեհափառ Հայրապետը, զգեստաւորուած, ուղեկցութեամբ Երուսաղէմի և Կ. Պոլսի Հայոց Պատրիարքների և տասներկու թեմական արքեպիսկոպոսների ու եպիսկոպոսների, ինչպէս նաև քոյր եկեղեցիների

digitised by A.R.A.R.@

հոգևոր պետերի, առաջնորդուեց Մայր Տաճարի զանգակատան առջև պատրաստուած բեմը՝ կատարելու սրբալոյս միւռոնի օրհնութիւնը։

Մայր Տաճարի ամբողջ չրջափակը լցուած էր տասնեակ հազարաւոր ուխտաւորներով, հաւատացեալներով և հիւրերով։

Ժամը 12ին սկսուեց միւռոնօրհնութեան արարողութիւնը ըստ Հայ Եկեղեցու դարաւոր կարգի և կանոնի։

Միւռոնօրհնութեան արարողութեանը ներկայ էր նաև ՀՍՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարեանը։

Արարողութեան վերջում Վեհափառ Հայրապետը քարոզեց Հայ ժողովրդի համար սրբալոյս միւռոնի ունեցած հոգևոր նշանակութեան մասին։

Միւռոնօրհնութեան արարողութիւնից յետոյ հանդիսաւոր մեծ թափորով Ամենայն Հայոց Հայրապետը, քոյր եկեղեցիների հոգևոր պետերը, ողջ հոգևորականութիւնը և թեմերի ներկայացուցիչները առաջնորդուեցին Վեհարանի դահլիճը, ուր Արևմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ և Ֆրանսիայի Հայոց Առաջնորդ Տէր Սերովբէ Արքեպիսկոպոսը շնորհաւորեց Հայոց Հայրապետին՝ սրբալոյս միւռոնի օրհնութեան ուրախ առիթով։ Դահլիճում ներկայ էր նաև Տիար Սարգիս Գասպարեանը։

Հանդիսութեան աւարտին օրհնութեան խօսքով հանդէս եկաւ Ամենայն Հայոց Հայրապետը։

Սեպտեմբերի 27ին, երկուշաբթի օրը, առաւօտեան ժամը 10ին, Վեհարանի հանդիսութեան դահլիճում տեղի ունեցաւ յոբելեանական հանդիսութիւն՝ նուիրուած Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Առաջինի գահակալութեան քսանամեակին։

Հանդիսութեանը ներկայ էին քոյր եկեղեցիների հոգևոր պետերն ու ներկայացուցիչները, ինչպէս նաև Երուսաղէմի և Կ. Պոլսի Հայոց Ամենապատ. Պատրիարքները, Հայ Եկեղեցու բոլոր թեմական առաջնորդները, թեմերի պատգամաւորները, Մայր Աթոռի բարեբարները և բազում այլ հիւրեր՝ ընդամէնը 350 հոգի։

Հանդիսութեանը Սովետական Հայաստանի կառավարութիւնը ներկայացնում էր ՀՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի Նախագահ Սարգիս Գասպարեանը։

Հանդիսութեան բացումը կատարեց յոբելեանական կենտրոնական յանձնաժողովի նախագահ Տ. Եղիշէ Սրբազան Պատրիարքը։

Յորելեար Կաթողիկոսի քսանամեայ գործունէութեանը նուիրուած Գերագոյն Հոգևոր Խորհրդի զեկուցագիրն ընթերցեց Տ. Կոմիտաս Արքեպիսկոպոսը։

Այս առթիւ Գերագոյն Հոգևոր Խորհրդի անունից Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Առաջինին նուիրուեց ոսկեձոյլ և ականակուռ «Հայրապետական արծիւ» չքանչանը։

Ապա ՀՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի Նախագահ Սարգիս Գասպարեանը հանդէս եկաւ ողջոյնի և շնորհաւորանքի խօսքով։

Այնուհետև ողջոյնի և շնորհաւորանքի խօսքերով հանդէս եկան՝ Տ. Շնորհք Պատրիարքը՝ յանուն Հայ Եկեղեցու նուիրապետական Աթոռների և բոլոր թեմերի, Տ. Գիմէն Պատրիարքը՝ յանուն Թուրք Պրամոսալ Եկեղեցու և Սինոդի, Տ. Դաւիթ Ե Կաթողիկոսը՝ յանուն Վրաց Եկեղեցու, Տ. Վասիլիոս Մար Թոմա Մատթէոս Ա Կաթողիկոսը՝ յանուն Մալաբար Եկեղեցու, Կարդի-

digitised by A.R.A.R.@

նալ Ժան Վիլլեբրանդը՝ յանուն Գոդաս Զ Պապի և Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցու, Ջերալդ Ալեքսանդր Էլիսոն Եպիսկոպոսը՝ յանուն Անգլիական Եկեղեցու, Գերմանաս Մամալիս Միտրոպոլիտը՝ յանուն Երուսաղէմի Յոյն Պատրիարքութեան, Մաուրիլիս Սակկի Վարդապետը՝ յանուն Երուսաղէմի Կաթոլիկ Ֆրանչիսկեան Միաբանութեան։

Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անուան ձեռագրաց Մատենադարանի տնօրէնութեան և գիտական խորհրդի անունից ողջոյնի խօսք ասաց նոյն հաստատութեան Տնօրէն Ակադեմիկոս Լևոն Խաչիկեանը։

Սիւնեաց հայութեան հետ մշակութային կապի կոմիտէի Նախագահ Վարդգէս Համազասպեանը, յանուն կոմիտէի, նոյնպէս ողջունեց և շնորհաւորեց Հայոց Հայրապետին։

Հանդիսութեան ժամանակ ընթերցուեցին նաև ողջոյնի և շնորհաւորանքի հեռագրեր։ Ջերմապէս ընդունուեց ՍՍՀՄ Մինիստրների Սովետին առընթեր կրօնական պաշտամունքների գործերի խորհրդի Նախագահ Վ. Ա. Կուրայեդովի շնորհաւորական հեռագիրը։

Հայոց Հայրապետի գահակալութեան քառամեակը հեռագրով շնորհաւորել էին նաև Հ. Բ. Ը. Միութեան ցկեանս Նախագահ Ալեքս Մանուկեանը և անուանի երաժիշտ-կոմպոզիտոր Արամ Խաչատրեանը։

Հանդիսութեան աւարտին շնորհակալութեան և երախտագիտութեան ջերմ խօսքով հանդէս եկաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Ժամը 16ին, Երևանի «Արմենիա» հիւրանոցի ճաշարան-ում յոբելեանական թենտրոնական յանձնաժողովը, ի պատիւ Հայոց Հայրապետի և բոլոր հիւրերի, կազմակերպեց պաշտօնական ճաշկերոյթ, որին ներկայ եղան 270 հոգի։

Սեպտեմբերի 28ին, Երեքշաբթի, առաւօտեան ժամը 10ին, Վեհափառ Հայրապետի գլխաւորութեամբ, բոլոր հոգևոր պետերը, պատգամաւորներն ու հիւրերը այցելեցին Միծոնական-բերդի Հայ նահատակաց յուշարձանը։ Այս առթիւ յուշարձանին դեղեցիկ ծաղկեպսակներ դետեղեցին Վեհափառ Հայրապետը, Տ. Գիմէն Պատրիարքը և Տ. Դաւիթ Ե Կաթողիկոսը։

Նահատակաց յուշարձանի յաւերժական կրակի շուրջ Հայ և քոյր եկեղեցիների հոգևոր պետերը, Հայ հոգևորականութիւնը և բոլոր պատգամաւորները միասնաբար աղօթեցին Հայ նահատակների հոգիների խաղաղութեան համար։

Ժամը 11ին քոյր եկեղեցիների հոգևոր պետերն ու ներկայացուցիչները Հայոց Հայրապետի գլխաւորութեամբ այցելեցին Մեսրոպ Մաշտոցի անուան ձեռագրաց Մատենադարան և Ծանօթացան Հայ մշակոյթի գանձերի հնադոյն նմուշներին։

Ժամը 12·30ին Հայոց Հայրապետի գլխաւորութեամբ Տ. Գիմէն Պատրիարքը և Տ. Դաւիթ Ե Կաթողիկոսը պաշտօնական այցելութիւն տուեցին ՀՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդ։

Ժամը 15ին, «Արմենիա» հիւրանոցում ՀՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի Նախագահ Սարգիս Գասպարեանը, յանուն հաքենի կառավարութեան և եկեղեցական իսորհրդի, ճաշկերոյթ տուեց ի պատիւ Հայոց Հայրապետի և նրա յարգարժան հիւրերի։

Երեկոյեան ժամը 20ին Վեհափառ Հայրապետը Բիւրականի «Հայկաշէն» հայրապետանոցում տուեց հրաժեշտի ընդունելութիւն քոյր եկեղեցիների հոգևոր պետերի և պատուիրակութիւնների պատուին։

digitised by A.R.A.R.@

Սեպտեմբեր 29ին, Հորեքշաբթի, Տ. Գիմեն Պատրիարքը, Տ. Դաւիթ Ե Կաթողիկոսը, Կարդինալ Վիլլեբրանդոնը, Ջերալդ Էլիսոն Եպիսկոպոսը, Գերմանոս Մամալիս Միտրոպոլիտը, իրենց շքախմբի անդամներով, հրաժեշտ տուին Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Մայր Աթոռին և մեկնեցան լաւագոյն տպաւորութիւններով։

Սեպտեմբերի 30ին, Հինգշաբթի, ժամը 13ին, Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ կատարուեց Վեհարանի բակում կանգնեցուած և Հայոց Հայրապետի 20ամեայ գործունէութեանը նուիրուած յոբելեանական խաչքարի հանդիսաւոր բացումը։

Այնուհետև յարգարժան հիւրերը Վեհարանում դիտեցին գեղարուեստական բարձր ճաշակով յօրինուած Հայոց Մեսրոպեան այբուբենի ոսկեգիր տառերը, որ պատրաստուել էր Հայոց Հայրապետի պատուէրով իր յոբելեանի առթիւ։

Ժամը 17ին Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ գումարուեց Եպիսկոպոսաց խորհրդակցական ժողով, որին մասնակցեցին Տ. Եղիշէ, Տ. Շնորհք Սրբազան Պատրիարքները, Թեմական առաջնորդները և հանդիսութեանց ներկայ եպիսկոպոսները՝ Թուով 20 հոգի։

Եպիսկոպոսաց սոյն խորհրդակցական ժողովը որոշեց յառաջիկայ տարի աշնանը հրաւիրել Եպիսկոպոսաց ժողով, որը Երուսաղէմի Հայոց Ամենապատիւ Տ. Եղիշէ Պատրիարքի հրաւէրով գումարուելու է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքում։

Հոկտեմբերի 3ին, Կիրակի, առաւօտեան ժամը 10ին կատարուեց Լոնդոնարնակ Գէորգ և Յովհաննէս Քիւրքճեան եղբայրների նուիրատուութեամբ վերակառուցուած Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու նաւակատիքն ու օծումը՝ ձեռամբ Արարատեան Թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Կոմիտաս Արքեպիսկոպոսի։

Օրուայ հանդիսութեան քարոզից Վեհափառ Հայրապետը։

Նոյն օրը ժամը 15ին, Երևանի «Մնի» հիւրանոցում, Արարատեան Թեմի առաջնորդական փոխանորդի և Թեմական խորհրդի կողմից, ի պատիւ հիւրերի, կազմակերպուեց հրաժեշտի ընդունելութիւն Ս. Սարգիս եկեղեցու օծման առիթով։

Հոկտեմբերի 4-5 օրերին հոգևորական և աշխարհական բոլոր պատգամաւորները հրաժեշտ տուին Հայոց Հայրապետին, Մայր Աթոռին և մեկնեցին շնորհակալ տպաւորութիւններով։

Սեպտեմբերի 25ից Հոկտեմբերի 5 օրերը Մայր Աթոռի մեր օրերի պատմութեան մէջ հանդիսացան անմոռանալի օրեր, որոնք վերածուեցին մեր հաւատքի կենտրոն Ս. Էջմիածնի, նրա արժանաւոր Գահակալի, մեր վերածընուած մայր հայրենիքի չուրջ, Հայ ժողովրդի համախմբուածութեան, սիրոյ, հաւատարմութեան համազգային մի սրբազան տօնի։

ՑՈՐԵԼԵԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՑԱՆՁԱԹՈՂՈՎ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին

5 Հոկտեմբերի 1976 թ.

digitised by A.R.A.R.@